«Հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N_____-Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետով, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 18-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու մասին» N 532 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության 2022թ. –ի
N _____ -Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորողների նախազորակոչային պատրաստության կազմակերպման և անցկացման գործընթացի հետ կապված հարաբերությունները:
2. Նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է ուսումնական հաստատություններում սովորող քաղաքացիներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու և նրանց մոտ հետևյալ ունակություններն ու տեղեկատվությունն ապահովելու նպատակով՝
1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գործունեության վերաբերյալ պատկերացումների ձևավորում.
2) ազգային բանակում ծառայելու գիտակցության ձևավորում.
3) զորամասերի զինվորական անձնակազմի կյանքին և կենցաղին, զենքին ու զինվորական տեխնիկային ծանոթացում.
4) տեսական և գործնական պատրաստմունքների միջոցով շարային ու կրակային պատրաստությունների իրականացում.
5) ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու դաստիարակում.
6) ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով մասնագիտական կողմնորոշման ընտրություն.
7) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի հիմունքների յուրացման ապահովումը,
8) քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու, առաջին օգնություն ցուցաբերելու ունակությունների, արտակարգ իրավիճակներում գործելու հմտության և անհրաժեշտ վարվելակերպի ձևավորում:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստությունը կազմակերպվում և անցկացվում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, ինչպես նաև գործնական պարապմունքների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասերում կրակային պատրաստության իրականացման միջոցով:
4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրային և

ուսումնական նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝
1) ուսումնամեթոդական դասագրքերը և ձեռնարկները.
2) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման համար,
3) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը,
4) մարտավարության, շարային պատրաստության և քաղաքացիական պաշտպանության պարապմունքների վայրերը,
5) ֆիզիկական կուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանամարզական միջոցառումների հրապարակները,
6) ժամապահի, օրապահի պարտականությունների գործնական պարապմունքների անցկացման կետերը,
7) ուսումնական զենքի մաքրման և յուղման, հրաձգության գործնական հնարքների կատարման մշակման տեղերը,
8) քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքը, պաշտպանական անհատական միջոցները, ճառագայթային և քիմիական հետազոտությունների ուսումնական սարքերը.
9) ուսումնադիտողական ձեռնարկները, ուսուցման տեխնիկական միջոցները:
5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը հաստատում է կրթության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարը՝ ծրագրի նախագիծը համաձայնեցնելով պաշտպանության, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ազգային անվտանգության, ոստիկանության բնագավառների պետական լիազոր մարմինների հետ:
6. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը ներառում է առարկայական չափորոշիչները, տեսական և գործնական պարապմունքների ժամանակացույցը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, մինչև տվյալ տարվա օգոստոսի 20-ը, ուսումնական հաստատության տնօրենի հրամանով հաստատվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում գործնական պարապմունքների ու կրակային պատրաստության իրականացման ժամանակացույցը, որի կազմման նպատակով ուսումնական հաստատությունը համագործակցում է կրթության, պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ազգային անվտանգության, ոստիկանության բնագավառների պետական լիազոր մարմինների իրավասու ստորաբաժանումների հետ:
7. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման և գործնական պարապմունքների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ուսումնական հաստատություններին ապահովում է ուսումնական զենքով և ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով, զինվորական գործին տիրապետելու համար անհրաժեշտ ուսումնադիտողական ձեռնարկներով ու ուսուցման տեխնիկական միջոցներով, իսկ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունն ապահովում է քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքի, պաշտպանական անհատական միջոցների, ճառագայթային և քիմիական հետազոտությունների ուսումնական սարքերի, քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող անհրաժեշտ ուսումնադիտողական ձեռնարկների ու ուսուցման տեխնիկական միջոցների հատկացումը: Կրակային պատրաստության իրականացման նպատակով ուսումնական հաստատությունները կցվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համապատասխան զորամասերին:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասու ստորաբաժանումները, համագործակցելով ուսումնական հաստատությունների հետ, վերահսկողություն են իրականացնում ուսումնական հաստատություններում ուսումնական զենքի և ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների պահպանման նկատմամբ:
8. Ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումն իրականացնում է ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչը (այսուհետ՝ զինղեկ), որը պատասխանատու է սովորողների նախազորակոչային պատրաստության պատշաճ կազմակերպման և անցկացման, ուսումնական հաստատության ուսումնական նյութատեխնիկական բազայի ստեղծման և համալրվածության համար: Զինղեկը հանդիսանում է նաև ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը և ապահովում է ուսումնական հաստատությունում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործընթացը: Զինղեկի պաշտոնային պարտականությունների և որակավորման պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ:
9. Սույն կարգի 5-րդ կետում նշված պետական մարմինները համագործակցում են զինղեկների ընտրության և նշանակման, նրանց վերապատրաստման ու մեթոդական աջակցության գործընթացում: Զինղեկներին օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հատկացվում է զինվորական համազգեստ: